

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՉԱՆՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### Ա. Ա. ՀԱԿՈՒՅԱՆ

XIX դարի երկրորդ քառորդի հայոց պատմության մեջ տեղի ունեցած կարևոր իրադարձություններից էր Հայկական մարզի ձևավորումը, որի կազմակերպման և գնահատման խնդիրը պատմագիտության մեջ, դեռևս, բավականաչափ ուսումնասիրված չէ: Հողվածում քննության են առնվում այս խնդրին վերաբերող մինչև հոկտեմբերյան և հետհոկտեմբերյան՝ հիմնականում հայ ու ռուս պատմագրության ներկայացուցիչների տեսակետները:

1828 թ. մարտի 21-ին հրապարակվեց Նիկոլայ 1-ի հրամանագիրը Հայկական մարզ կազմակերպելու մասին. «Պարսկաստանի հետ կնքված դաշնագրի ուժով Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի խանությունը և Նախիջևանի խանությունը Հրամայում ենք այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ և մտցնել այն Մեր Տիրոջ սի մեջ»<sup>1</sup>:

Հայկական մարզի կազմակերպման և գնահատման խնդիրը պատմագրության մեջ տարբեր մեկնաբանությունների է արժանացել. մախ Հայկական մարզը լիովին նույնացվում էր նահանգի հետ: Վենետիկի Մխիթարյանների միաբանությունը 1828 թ. հրատարակեց Ռուսաստանի կողմից «Մեծ Հայաստանի մի մասի» ազատագրումը և նրա «Հայկական նահանգ» անվանումը ողջունող հոդված<sup>2</sup>: Եվրոպացի ճանապարհորդ Շվեյգեր-Լեբխենֆելդը գրում է. «Ռուսաստանը Թյուրքմենչայի դաշնագրի (1827) գործյամբ տեր դարձավ Երևանի խանության և այսպիսով ստեղծեց իրա համար մի Ռուս-Հայկական նահանգ»<sup>3</sup>: Այս որակումը անտեսում է ինչպես Հայկական մարզի պաշտոնական անվանումը, այնպես էլ նրա մեջ համանահանգային կառուցվածք մտցնելու աստիճանականությունը:

Մինչև հոկտեմբերյան ռուսական պատմագրությունը որոշակի տեղ է հատկացրել Հայկական մարզի կազմակերպման և գնահատման հարցի լուսաբանմանը: Թեև ռուսական պատմագրությունը խնդրո առարկա հարցը գնահատել է մախ ռուսական պետականության շահերի տեսանկյունից, սակայն, բնականաբար, անդրադարձել է նաև հայ ժողովրդի կյանքում Հայկական մարզի ունեցած նշանակությանը:

Հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական կյանքի համար Հայկական մարզի ստեղծման կարևոր նշանակությունը հիմնավորում է Ս. Գլինկան, որը, ըստ իս, ճիշտ էր գնահատում այդ իրողության դրական հետևանքները հայ ժողովրդի կյանքում: Այս հարցում նա, անշուշտ, իր ժամանակի ոգու արտահայտիչն էր, հետևաբար և ռուսական քաղաքականության ջատագովը: Գլինկան առանձնակի ոգեշնչումով է գնահատում այդ իրադարձությունը, կարևորում նրա պատմաքաղաքական նշանակությունը: «1828 թվականի մարտի 21: Հին Հայաստանի անունը հարություն առավ պարսից նախկին խանություններում: Նա հարություն առավ իր անվան մեջ՝ Հայկական մարզ, և երաշխավորվեց ավանդույթներով: Ավանդույթներ, որոնք ավետեցին մարդկային ցեղի երկրորդ

<sup>1</sup> "Полное Собрание Законов Российской Империи". Собрание 2-е, т. 3, СПб, 1830, с. 272-273.

<sup>2</sup> Տե՛ս "Об Армянской области" — Журнал министерства внутренних дел, 1835, ч. 16, էջ 140, 141:

<sup>3</sup> Շվեյգեր-Լեբխենֆելդ, Արարատի նահանգը, «Փորձ», 1880, համար 2, Հավելված:

վերածնունդը...»<sup>4</sup>: Մեկ այլ միտք ավելի է ամբողջացնում նրա պատմափիլիսոփայական մտածությունը հայոց պատմության հարցերի շուրջ: «Ինչպես մշուշոտ ուրվական, կործանվեց Հոմերական կայսրությունը, որից ցնցվեց նաև Հայաստանը: Լուռ է օսմանցիմների տիրապետած Մակեդոնիան, այն Մակեդոնիան, որ տվել էր Ալեքսանդրը՝ աշխարհին տիրանալու համար: Իսպառ կորել է նրա զորավոր անունը, որի նվաճած երկրների թվում էր նաև Հայաստանը ... Բայց Հայկական մարզը հարություն առավ Թուրքիայի և Պարսկաստանի դիմաց: Հարություն առավ, քանի որ դեպի հայրենին ու ազատությունը ունեցած նվիրվածությունը հայերին ստիպեց զուհարերելու ամեն ինչ»<sup>5</sup>: Իր այս ուշագրավ հարցադրումը Գլինկան ավարտում է հայերի և Հայաստանի համար մի կարևոր ընդգծումով, որն, անշուշտ, չի կորցրել իր այժմեական նշանակությունը. «Հայկական մարզի վերածնունդը կարող է անմիջականորեն նպաստել եվրոպական կրթությունը Ասիայի սահմաններում տարածելու և զարգացնելու համար»<sup>6</sup>: Այսպիսով, հայոց պատմության հարցերը քննելիս Գլինկան հետամուտ է եղել գտնելու դեպքերի քաղաքակրթական (եվրոպական) նշանակությունը: Չնայած իր «պահպանողական» քաղաքական հայացքներին, «միապետական» կողմնորոշմանը՝ նա հայ ժողովրդի պատմության հարցերը դիտարկում էր համաշխարհային քաղաքակրթության տեսանկյունից:

Հայկական մարզի ստեղծման կարևորությունն ընդգծում էր նաև կովկասագիտական դպրոցի ամենանշանավոր ներկայացուցիչ Վ. Ա. Պոտտոն: Խոսելով Հայկական մարզի ստեղծման մասին՝ ռազմական պատմաբանը ըստ էության հանգեց այն ճիշտ եզրակացությանը, որ «դա եղավ դարավոր աղետների ու կեղեքումների մեջ իր հոգևոր ինքնությունը պահպանած հնագույն ժողովրդի իրավունքների վերականգնումը և կոչը դեպի նոր կյանք», և որ «Հայկական մարզի վերականգնմամբ ապագայի արշալույսը ծագեց նաև ողջ հայ ժողովրդի համար», քանզի «հայ ժողովրդի իրավունքների վերականգնումը տարածվում էր ոչ միայն այն մարզերի վրա, որոնք դրվում էին հավատակից թագավորության պաշտպանության տակ», այլև նրանց, «որոնք դեռ մնացել էին մահմեդականների տիրապետության տակ»<sup>7</sup>: Չնայած այս գնահատականի ենթատեքստում տեսանելի է «ինքնակալության ջատագովության գաղափարը», այնուամենայնիվ այստեղ կա որոշ ճշմարտություն:

Ֆրանսիացի հայագետ Է. Դյուլորեն այն միտքն է հայտնել, որ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովրդի վաղեմի երազանքը «ազգության վերածնության» վերաբերյալ «որոշ չափով իրականացավ, երբ Ռուսաստանը ազատագրեց նրանց պարսկական լծից, և 1828թ. մարտի 21-ին Սեմատին տրված հրամանը Երևանի և Նախիջևանի խանություններին շնորհեց Հայկական մարզ անունը»<sup>8</sup>: Դյուլորենն ելնում էր այն փաստից, որ դեռ հնուց Ռուսաստանում «... հայերը օգտվում էին խաղաղությունից, անվտանգությունից, իսկ ցար Ալեքսեյ Միխայլովիչի ժամանակից սկսած՝ թագավորների բարեհաճությունից»<sup>9</sup>: Տալով նման գնահատական՝ Դյուլորենն, փաստորեն, ելակետ էր քնդումում հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմությունը և հաշվի առնում Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը, որը օրյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի շահերին:

Վերոիշխյալ կարծիքներին հակառակ տեսակետ է արտահայտել Կովկասի կառավարիչ Ի. Ֆ. Պասկևիչի կենսագիր Մ. Շչերբատովը: Նա գրում է, որ Երևանի և Նախիջևանի խանությունները Հայկական մարզ անվանելու մասին հրամանագիրը «կարող էր առիթ

<sup>4</sup> С. Н. Глинка. Обзор истории армянского народа от начала бытия до возрождения области Армянской в Российской империи. М., 1832, ч. 1, с. 21.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 36-37:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>7</sup> В. А. Потто. Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях. Т. 3, Персидская война, 1826-1828 гг., выпуск 4, СПб., 1887, с. 653, 654.

<sup>8</sup> Нынешние армяне, Сочинение Дюлорье. Тифлис, 1856, с. 38.

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 86:

տալ թեթևամիտ ենթադրության մեր կառավարության՝ իբր «հայ ազգը վերածնելու», առավելապես հայ բնակչության բարեկեցությունը հոգալու մասին ցանկության և եթե ոչ գոհ բերելու նրան, ապա գոնե ետին պլան մղելու մահմեդականների օրինական շահերը: Արքեպիսկոպոս Ներսեսը գտնվում էր հենց այդպիսի մոլորության մեջ, որից նրան հանեց կոմս Պասկևիչը...»<sup>10</sup>: Սակայն հարկ է ասել, որ երկրին «հայկական» անուն տալը դրան էր միտված, քանի որ այդ ժամանակ երկու խանությունները հայկական անվանել չէր կարելի ազգազրական տեսակետից: Բացի այդ, Հայկական մարզի ստեղծումը և նրա ներառումը ցարական տիրոջ մեջ, իհարկե, հայերի մեջ պիտի որոշ հայրենասիրական տրամադրություններ ստեղծեին, գուցե նույնիսկ մաս քաղաքական ակնկալություններ:

Ազատագրական շարժման գործիչների ակնկալությունները արձագանք գտան հայ պատմագրության մեջ որպես Նիկոլայ I-ի Հայկական դքսություն ստեղծելու պարտավորություն ստանձնելու մասին լեգենդ, որը շրջանառության մեջ էր դրվել Ա. Պերպերյանի կողմից<sup>11</sup>: Ելնելով այդ մոտեցումից՝ Մ. Մուրադյանը գտնում է, որ Ռուսաստանը դրժել էր ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո Հայաստանին անկախություն շնորհելու «խոստումները»<sup>12</sup>: Ա. Չոպանյանի կարծիքով՝ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը երևան բերեց հայ ժողովրդի առջև թագավորության «միրաժի» վաղանցիկ և կարճատև տեսլականը<sup>13</sup>: Ավելի կտրուկ է Ե. Գեղամյանը, որը գտնում էր, որ ռուսական կողմնորոշման հայ գործիչները՝ Իսրայել Օրիից մինչև Լազարյաններ և Ներսես Աշտարակեցի, «մեծամեծ գոհեր են մատուցել ռուս դիվանագիտության սեղանին», որոնք չարժևորվեցին. «Այնպես որ՝ եթե կառավարութեան և հայ ազգի փոխադարձաբար միմեանց մատուցած ծառայությունները կշռելու լինենք. – նժարի ծանրությունը անշուշտ մեր՝ հայերիս, կողմը կը լինի»<sup>14</sup>: Ն. Բ. Սարուխանյանը գտնում է, որ 1828 թ. կար Հայաստանի վերածնության ազգային իդեալի պատկերացում: Սակայն XIX դարի 20-ական թթ. հայ, ինչպես և վրացի գործիչները չհասկացան, որ իրենց վերապահված էր ոչ թե անկախության, այլ ցարական վարչակարգի պայմաններում ապրելու դերը<sup>15</sup>: Ե. Հ. Շահազիզի կարծիքով Հայկական մարզը «կունենար յուր ներքին ինքնուրույնությունը և ինքնավարության պես մի բան», եթե չլիներ Պասկևիչի գործունեությունը կառավարման համապետական համակարգ մտցնելու ուղղությամբ<sup>16</sup>:

Այս հայեցակարգերում դրսևորվում է Հայկական մարզի՝ որպես ազգային օջախի, Ռուսական Հայաստանի կորիզի, նշանակության թերագնահատումը, մինչդեռ այն հանգեցրեց Հայաստանի Հանրապետության՝ ձևով հայկական պետականության վերականգնմանը: Դրանք հաշվի չէին առնում ինքնակալության իրական նպատակները և ազատագրական շարժման ներկայացուցիչների գործունեության նվաճումները Ռուսաստանի հեռանկարային քաղաքականության տեսանկյունից:

Ըստ Լ. Աճեմյանի, «Հայկական շրջանի կազմութիւնը յոյսեր ներշնչած էր Հայոց՝ թէ հոն պիտի կազմուի Հայաստան մը: Իրաւ ալ, սկզբնական նպատակը այդ եղած էր կառավարութեան, բայց հիմա, այդ բանը վտանգաւոր կը նկատուէր ու պետք էր ջնջել այդ տպաւորութիւնը»<sup>17</sup>:

<sup>10</sup> М. Щербатов. Генерал-фельдмаршал, князь Паскевич, его жизнь и деятельность, т. 3, СПб, 1891, с. 320-321.

<sup>11</sup> Տե՛ս Ա. Պերպերյան, Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 282:

<sup>12</sup> Տե՛ս Մ. Մուրադյան, Հայ առաքելական սուրբ եկեղեցու պատմություն, Երուսաղեմ, 1872, էջ 600-601:

<sup>13</sup> Տե՛ս Ա. Չոպանյան, Ռուսիա և հայերը, «Անահիտ», 1906, համ. 3-4-5, էջ 34:

<sup>14</sup> Ե. Ա. Գեղամեան, Մտորումներ, Թիֆլիս, 1907, էջ 4:

<sup>15</sup> Տե՛ս Ն. Բ. Սարուխանյան, Արևելյան Հայաստանի միացման պրոբլեմը մինչև հոկտեմբերյան հայ պատմագրության մեջ, Եր., 1971, էջ 58, 70:

<sup>16</sup> Տե՛ս Ե. Հ. Շահազիզ, Հին Երևանը, Եր., 2003, էջ 232:

<sup>17</sup> Լ. Աճեմյան, Հայոց պատմութիւն, մոր դարեր և ժամանակակից շրջան, գիրք Գ, Գահիրե, 1936, էջ 74:

Վ. Ա. Դիլոյանի կարծիքով, «Ցարական կառավարությունը չէր կամենում և չէր էլ կարող ընդառաջել հայ ժողովրդի ու նրա ներկայացուցիչների դարավոր բաղձանքներին: Բայց նա հարկադրված էր ինչ-որ չափով հաշվի նստել դրանց հետ, որի արտահայտությունը եղավ «Հայկական մարզի» ստեղծումը: Դրանով ցարական կառավարությունը ուզում էր այն պատրանքն ստեղծել, որ ընդառաջել է հայ ժողովրդի ձգտումներին»<sup>18</sup>:

Առանձին պատմաբանների հայացքների պատրանքայնությունը մերժվեց Վ. Պարսամյանի կողմից. «Ցարական կառավարությունը Հայկական մարզի ստեղծման հետ բնավ չէր կապում ո՛չ «անկախ», ո՛չ «ավտոնոմ» Հայաստան և ո՛չ Ռուսաստանի հարավում «բուֆերային» մի պետություն ստեղծելու նպատակը: Նա բոլորովին էլ մտադիր չէր իր հսկա պետության մեջ նոր պետություն ստեղծել, այն էլ՝ օտարազգի: Դա հսկաստում էր նրա պետական սխտեմին, նրա դասակարգային և ազգային քաղաքականության ոգուն: Հայկական մարզի վրա ցարական կառավարությունը նայում էր որպես կայսրության մեջ մտնող տերիտորյալ մի միավորի վրա, ենթակա թագավորի իշխանությանը, զուրկ ազգային ինքնուրույն պետական իրավունքներից»<sup>19</sup>:

Վ. Ա. Պարսամյանի այս միտքը զարգացնում է Պ. Հովհաննիսյանը. «Հայ ազատագրական գործիչների պատրանքների հատուցումը եղավ Նիկոլայ 1-ի 1828 թ. մարտի 21-ի հրամանագիրը, ըստ որի նորանվան երկրամասը հորջորջվում էր «Հայկական մարզ» բազմանշանակ անունով: Անշուշտ Հայկական մարզը ո՛չ Հայկական թագավորություն էր և ո՛չ էլ ինքնավար Հայաստան, այլ Ռուսական կայսրության սովորական վարչական միավոր, որի անվանումը խաբուսիկ պատրանքներ էր ծնում հայ ազատագրական շրջաններում: Հիմնելով Հայկական մարզը, ցարական կառավարությունը այն տպավորությունն էր ստեղծում, թե իբր ընդառաջել է հայերի ձգտումներին: Սակայն այդ պատրանքները շատ շուտով հօսք ցնդեցին: Իրականում դա մի ցուցանակ էր, որի հետևում ցարիզը ձեռնամուխ եղավ իր սովորական գաղութային քաղաքականությանը»<sup>20</sup>:

Ինքնակալության քաղաքականության հանդեպ քննադատական մոտեցումը առընչվում էր մեծապետական մտադրությունների և հայ գործիչների իրական առաջարկությունների հարաբերակցության գիտակցման, նրանց փոխհամաձայնության հետ: Ինքնակալությունը հաշվի էր առնում հայերի ազգային երազանքը այնքանով, որքանով այն համապատասխանում էր մեծապետական նկրտումներին: Յուրաքանչյուր թագակիր միապետի մոտեցումը պայմանավորվում էր պատմական տվյալ ժամանակում Ռուսական տերության գործառնական կարողությամբ: Հայ ժողովրդի և Ռուսաստանի շահերը զգալիորեն միահյուսվում էին: Ինքնակալությունը պետք է արտահայտեր Ռուսաստանի մեծապետական շահերը, որոնք չէին կարող բոլոր տեսանկյուններով համընկնել հայ ժողովրդի ակնկալություններին: Նկատի ունենալով մոտեցող ռուս-թուրքական պատերազմը՝ Նիկոլայ 1-ը Հայկական մարզի ստեղծմամբ զգուշավորությամբ ընդառաջեց հայ գործիչների առաջարկներին:

Բ. Բորյանի կարծիքով, «Ցարական Ռուսաստանի քաղաքական շահերը պահանջում էին հայերի «փայփայման» դարաշրջանի ստեղծում»<sup>21</sup>: Ըստ նրա՝ 1828թ. մարտի 21-ի հրամանագրի վերջին բառով «մեր» ցարիզմի կողմից լուծվեց Հայկական հարցը: Այդ ակտով ավարտվում էր հայ ժողովրդի ազատագրության համար պայքարի որոշակի շրջանը, որը սկսել էր XVII դարի վերջից և հասնում էր մինչև XIX դարի սկիզբը<sup>22</sup>:

Ի. Մ. Գազարյանը Հայկական մարզի 12-ամյա ժամանակաշրջանը բնութագրել է «որպես ռուսական ցարիզմի կողմից, որը նպատակ ուներ ռուսականացնել երկրամասը և

<sup>18</sup> Վ. Ա. Դիլոյան, Արևելյան Հայաստանը 19-րդ 1-ին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 327:

<sup>19</sup> Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1947, էջ 138-139:

<sup>20</sup> «Հայոց պատմություն, Հիմնահարցեր», Եր., 2000, էջ 160:

<sup>21</sup> Б. А. Борьян. Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М.-Л., 1928, с. 154.

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 169-170:

աստիճանաբար նախապատրաստել ռուսական նահանգներից մեկի վերածման, կառավարման ձևի որոնումներ և ռուսական օրենքների հետ տեղական սովորույթները զուգակցելու ձգտում»<sup>23</sup>: Նա Հայկական մարզի կազմավորման նշանակությունը պայմանավորում է նրանով, որ «ստեղծվեց տարածքային միջուկ, որը դարձավ ձգողական կենտրոն ողջ աշխարհով ցրված հայերի համար: Հայերը Հայկական մարզի տարածքում ոչ միայն փրկվեցին կործանումից, այլ ստացան գույքային անվտանգություն, որոշ իրավունքներ»<sup>24</sup>:

Հայկական մարզի ստեղծման «օբյեկտիվորեն որոշ դրական նշանակություն ունենալը» նշելով՝ Չ. Տ. Գրիգորյանը գրում է. «Մասնավորապես Հայկական մարզի կազմակերպումով ստեղծվեց «հավաքական մի օջախ», որը իրեն էր ձգում թուրք փաշաների, քուրդ բեկերի և պարսիկ խաների տիրապետության տակ տառապող տասնյակ հազարավոր հայերի»<sup>25</sup>:

Համաձայն Թ. Հակոբյանի տեսակետի՝ Հայկական մարզի կազմակերպումով ցարական կառավարությունը նպատակ էր հետապնդում «այն ծառայեցնել իբրև միջանկյալ վարչական օղակ խանական շրջանի վարչաձևը աստիճանաբար ոչնչացնելու և ցարական վարչաձևը արժատավորելու համար», «այն կոչելով «Հայկական մարզ»՝ դրանով իսկ արտաքնապես ցույց տալ, որ իր վարչական բաժանման մեջ հաշվի են առնված տեղական-ազգային պայմանները և, իբր, նրանում միավորված հայկական շրջաններին, որոնք կազմում են Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի զգալի մասը, տրված են որոշ արտոնություններ»<sup>26</sup>:

Մ. Ա. Մուրադյանը Հայկական մարզի կազմակերպումը պայմանավորում էր ցարական կառավարության հետապնդած քաղաքական դրոշակի նպատակներով. «Հարկավոր էր սիրաշահել հայերին, ընդլայնել ներգաղթը՝ դրանով իսկ տպավորություն գործելով աշխարհի տարբեր վայրերում ապրող հայության վրա, ցույց տալ նրանց Ռուսաստանի բարեհաճ վերաբերմունքը իրենց հայրենակիցների նկատմամբ»<sup>27</sup>: Գտնելով, որ Հայկական մարզի ստեղծումը «գերազանցապես կրում էր ձևական բնույթ», նա ընդգծում է դրա «բարոյաքաղաքական նշանակությունը հայ ժողովրդի համար»<sup>28</sup> ու ընդհանուր առմամբ խաղացած դրական դերը հասարակական-տնտեսական ու քաղաքական կյանքում<sup>29</sup>:

Գ. Լազյանը Հայկական մարզի կազմակերպումը կապում է 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետ և նույնպես նշում Հայկական մարզի կազմավորման բարոյաքաղաքական նշանակությունը. «Երկար դարերու ընթացքին առաջին անգամն էր, որ Հայաստան կը վերակենդանանար հայոց մտածողության մեջ»<sup>30</sup>:

Հայկական մարզի կազմակերպման փաստը բացատրելու հարցում ավելի համակողմանի է Վ. Գ. Թունյանի տեսակետը: Նա գրում է. «Նիկոլայ 1-ի անձնական որոշումը Հայկական մարզի ստեղծման ուղղությամբ ուներ մի շարք տեսանկյուններ. հարավային սահմաններում հայ բնակչության կենտրոնացում, ապրկովկասյան տիրույթների անվտանգության ամրապնդում, նոր ձեռք բերված տարածքների տնտեսական յուրացում, Օսմանյան Ելյարքի վրա ճնշման ցուցադրում, առաջին ռուս-թուրքական (1828-1829 թթ.)

<sup>23</sup> И. М. Газарян. К истории образования "Армянской области"(1828г.). Автореферат дис. на с.у.с.к.и.н., Ер., 1953, с. 24.

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>25</sup> Չ. Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Եր., 1978, էջ 286:

<sup>26</sup> Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, էջ 422:

<sup>27</sup> Մ. Ա. Մուրադյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ, Եր., 1985, էջ 79-80:

<sup>28</sup> М. А. Мурадян. Восточная Армения в русской историографии, Ер., 1990, с. 56.

<sup>29</sup> Տե՛ս Մ. Ա. Մուրադյան, Հայոց պատմության հիմնահարցերը ռուսական պատմագրության գնահատմամբ, Եր., 1995, էջ 98:

<sup>30</sup> Գ. Լազյան, Հայաստան և Հայ դատը, Եր., 1991, էջ 5:

պատերազմի ընթացքում արևմտահայերի համակրանքի գրավում»<sup>31</sup>: Այսպիսով, Հայկական մարզի ստեղծման հիմքում ընկած էին ռազմաքաղաքական և տնտեսական նկատառումները: «Որոշումը արտահայտում էր մաև Ռուսական կայսրության կազմում «օտար» ժողովուրդների՝ Լեհական թագավորություն, Ֆինլանդական մեծ իշխանություն, Վրաստանի գերագույն կառավարություն և Բեսարաբիայի մարզ, կազմակերպման փորձը»<sup>32</sup>: Իսկ Հայկական մարզի ստեղծման համար հիմք է հանդիսացել Խ. Ե. Լազարյանի 1828 թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին Նիկոլայ 1-ին ներկայացված գրությունը՝ «Լրացումներ և ենթադրություններ Վրաստանի մասին»<sup>33</sup>:

Ըստ Ռ. Ավագյանի՝ «Հայկական մարզի ստեղծման հետ մեկտեղ վերականգնվում էր հայ ժողովրդի առաջավոր զավակների դարերով փայփայած գաղափարը՝ հայրենիքի ազատության և անկախության խղճալը: Արևելյան Հայաստանի ազատագրման և Հայկական մարզի ստեղծման փաստը չէր կարող ոգևորիչ օրինակ չհանդիսանալ հայ ժողովրդի մյուս հատվածի՝ թուրքական լծի տակ տառապող արևմտահայերի ազատագրական պայքարի գործում»<sup>34</sup>:

Այնուհանդերձ, Հայկական մարզի գոյության ողջ ժամանակ ժողովուրդը կրում էր դժվարություններ ոչ միայն նախորդ տարիների ընթացքում երկրամասի տնտեսական քուլագման, ոչ միայն ցարական կառավարության տնտեսական քաղաքականության, ուրը այդ առաջին տասնամյակում զգալիորեն մեղմ էր, այլև բյուրոկրատական կառավարման, աստիճանավորների կաշառակերության, գործերի խճճվածության և ռուսական օրենքները տեղական սովորույթներին հաշտեցման ապարդյուն փորձերի հետևանքով: Հայկական մարզի կազմակերպման նշանակության գնահատման ժամանակ չի կարելի աչքաթաղ անել այս կարևոր գործունեությունը:

Հայկական մարզի ստեղծման մասին որոշումը՝ որպես Ռուսաստանում հայերի մի մասի վարչատարածքային կառավարման ձև, ճակատագրական էր: Անվանական ռեակրիպտով Նիկոլայ 1-ը կարգադրեց Կովկասի կառավարիչ Ի.Ֆ. Պասկևիչին Պարսկաստանից հայ վերաբնակիչներին տեղավորել բացառապես Երևանի գավառում: Այդ ժամանակ Հայկական մարզը ապագայնացված երկրամաս էր: 1827թ. 119650 բնակչից միայն 24952 էին հայեր, այսինքն՝ 20,8 տոկոսը: Հայկական մարզի հիման վրա 1850թ. հունվարի 1-ին կազմավորված Երևանի նահանգում հաշվվում էր 217234 մարդ, որի մեծ մասը հայեր էին<sup>35</sup>:

Արևելյան Հայաստանում ռուսական քաղաքականությունը թույլ տվեց վերականգնել Արարատյան երկրի հայկական նկարագիրը: Փաստացի արձանագրված էր տերության ներսում հայկական կազմավորման՝ որպես Հին Հայաստանի մի մասի գոյությունը: Հայկական մարզի կազմակերպմամբ ինքնակալությունը ճանաչեց անցյալում հայկական պետականության գոյության փաստը, վերականգնեց Հայաստան անունը պատմական մոռացումից: Ռուսական Հայաստանի տարածքի վրա իրական դարձավ հայ ժողովրդի վերածնունդը, և դրվեց հայկական պետականության վերականգնման հիմքը:

Այսպիսով, Հայկական մարզի ստեղծման և դրա նշանակության գնահատման հարցում ռուս և հայ պատմագրության մեջ եղել են տարակարծություններ: Սակայն մի հարցում նրանք գրեթե համակարծիք էին: Դա այն էր, որ Հայկական մարզի կազմակերպումը խիստ կարևոր նշանակություն ունեցավ ազգային ինքնագիտակցության համար: Այն սկիզբ դրեց հայ ժողովրդի ազգահավաքմանը, առաջին անգամ ընդգրկեց պարսիկ խաների տիրապետության ժամանակ բաժան-բաժան այրված հայկական հողերը, նպաստեց երկրամասի հասարակական-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացմանը:

<sup>31</sup> В. Г. Тунян. Русская политика в Армении: Мифы и реалии. Ер., 1998, с. 18-19.

<sup>32</sup> В. Г. Тунян. Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1 пол.19 в.. Ер., 2003, с. 42-43.

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>34</sup> Ռ. Ավագյան, Մեր ժողովրդի անձնվեր բարեկամը, «Հայրենիքի ձայն», 23.05.1985, համ. 4:

<sup>35</sup> Տե՛ս В. Г. Тунян, Русская политика в Армении, էջ 19:

**А. А. АКОПЯН** — *Историческая наука о создании Армянской области и о его значении.* — Создание Армянской области по-разному оценивается в исторической литературе. Некоторые историки ставят под сомнение значение Армянской области как национального очага, ядра Русской Армении, которому мы обязаны восстановлением армянской государственности в форме Республики Армения. Но вот в чем все историки сходятся: создание Армянской области имело то большое и весомое значение, что самодержавие тем самым признавало существование армянской государственности в прошлом, извлекало само имя «Армения» из исторического небытия, формировало особое административное управление для части армян в Российской державе. А дальнейшее существование Армянской области дало основание для формирования чиновничества, открыло доступ к образованию, создало поприще госслужащих, вообще всячески способствовало развитию населения Восточной Армении.